

Կ Ա Ր Գ

ՈՐՊԵՍ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՔ ՄՇՏԱԿԱՆ ԲՆԱԿՈՒԹՅԱՆ ՏԵՂԱՓՈԽՎԱԾ ԱՆՁ ՃԱՆԱԶՎԱԾ ՕՏԱՐԵՐԿՐՅԱ ՖԻԶԻԿԱԿԱՆ ԱՆՁԱՆՑ ԿԱՄ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ՓԱԽՍՏԱԿԱՆԻ, ՀԱՐԿԱԴԻՐ ՏԵՂԱՀԱՆՎԱԾԻ ԿԱՐԳԱՎԻՃԱԿ ՍՏԱՅԱԾ ՕՏԱՐԵՐԿՐՅԱ ՖԻԶԻԿԱԿԱՆ ԱՆՁԱՆՑ ՆԿԱՏՄԱՄԲ ԱՐՏՈՆՈՒԹՅԱՆ ԿԻՐԱՌՄԱՆ

1. Սույն կարգով կարգավորվում են որպես Հայաստանի Հանրապետություն մշտական բնակության տեղափոխված անձ ճանաչված օտարերկրյա ֆիզիկական անձանց կամ Հայաստանի Հանրապետության տարածքում փախստականի, հարկադիր տեղահանվածի կարգավիճակ ստացած օտարերկրյա ֆիզիկական անձանց կողմից ներմուծվող անձնական օգտագործման ապրանքների մաքսային վճարների արտոնության կիրառման հետ կապված իրավահարաբերությունները:

2. Հայաստանի Հանրապետություն մշտական բնակության տեղափոխված անձ ճանաչված օտարերկրյա ֆիզիկական անձը կամ փախստականի, հարկադիր տեղահանվածի կարգավիճակ ստացած օտարերկրյա ֆիզիկական անձը «Մաքսային կարգավորման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 249.1-ին հոդվածում նշված արտոնությունից օգտվելու համար մաքսային մարմիններին է ներկայացնում դիմում, որում նշում է տեղեկություններ Հայաստանի Հանրապետություն ներմուծված անձնական օգտագործման օգտագործված ապրանքների անվանման, քաշի և քանակի վերաբերյալ՝ կցելով հետևյալ փաստաթղթերը՝

1) Հայաստանի Հանրապետության քաղաքացիություն, կամ Հայաստանի Հանրապետության հատուկ, կամ Հայաստանի Հանրապետության մշտական (երկարաժամկետ) կացության կարգավիճակ, կամ միջազգային պայմանագրով սահմանված դեպքում դրանց հավասարեցված կարգավիճակ ունենալու հանգամանքը հաստատող փաստաթուղթը,

բացառությամբ փախստականի, հարկադիր տեղահանվածի կարգավիճակ ստացած օտարերկրյա ֆիզիկական անձանց.

2) օտարերկրյա ֆիզիկական անձին մշտական բնակության համար Հայաստանի Հանրապետություն տեղափոխված անձ ճանաչող կամ փախստականի, հարկադիր տեղահանվածի կարգավիճակը հաստատող՝ Հայաստանի Հանրապետության կառավարության լիազոր մարմնի տրամադրած փաստաթուղթը.

3) մինչև Հայաստանի Հանրապետություն ժամանումն օտարերկրյա պետությունում ֆիզիկական անձի բնակության փաստը հավաստող փաստաթուղթը.

4) սույն կետում չհիշատակված, «Եվրասիական տնտեսական միության մաքսային օրենսգրքի մասին» 2017 թվականի ապրիլի 11-ին ստորագրված պայմանագրի անբաժանելի մասը կազմող Եվրասիական տնտեսական միության մաքսային օրենսգրքի 261-րդ հոդվածում նշված՝ անձնական օգտագործման ապրանքների հայտարարագրման ժամանակ պահանջվող փաստաթղթերը.

5) օտարերկրյա պետության լիազոր մարմնի տրամադրած՝ անձնական օգտագործման տրանսպորտային միջոցներ հանդիսացող՝ ավտոտրանսպորտային և մոտոտրանսպորտային միջոցների, ավտոտրանսպորտային և մոտոտրանսպորտային միջոցների կցորդների արտոնությունից օգտվել ցանկացող ֆիզիկական անձի անունով գրանցման և սեփականության փաստը հաստատող փաստաթղթերը՝ անձնական օգտագործման տրանսպորտային միջոցի ներմուծման դեպքում:

3. Սույն կարգի 2-րդ կետում նշված փաստաթղթերը օտար լեզվով ներկայացնելու դեպքում, մաքսային մարմնի պահանջով, «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքին համապատասխան, դիմումատուին պարտավոր է ներկայացնել նաև դրանց՝ օրենքով սահմանված կարգով կատարված հայերեն թարգմանությունները:

4. Մաքսային մարմնի համապատասխան կառուցվածքային ստորաբաժանումն ուսումնասիրում է ներկայացված փաստաթղթերն ու տեղեկությունները և դրանք սույն կարգով, «Մաքսային կարգավորման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ պարբերությամբ և 249.1-ին հոդվածով սահմանված պահանջներին համապատասխանելու դեպքում, անձի դիմումը ստանալուց հետո երեք աշխատանքային օրվա ընթացքում թույլատրում է անձին առանց մաքսային վճարների վճարման հայտարարագրել իր անձնական օգտագործման ապրանքները, այդ թվում՝ անձնական օգտագործման տրանսպորտային միջոցը: Եթե ներկայացված փաստաթղթերը և տեղեկությունները թերի են և (կամ) չեն համապատասխանում սույն կետում նշված պահանջներին, մաքսային մարմինը սույն կետով սահմանված ժամկետում մերժում է դիմումը՝ նշելով մերժման պատճառը, բացառությամբ սույն կարգի 5-րդ կետում նշված դեպքի:

5. Սույն կարգի 2-րդ կետում նշված դիմումը՝ առանց սույն կետի 2-րդ ենթակետով պահանջվող՝ օտարերկրյա ֆիզիկական անձին մշտական բնակության համար Հայաստանի Հանրապետություն տեղափոխված անձ ճանաչող փաստաթղթի ներկայացված լինելու դեպքում, անձի դիմումը ստանալուց հետո ոչ ուշ, քան երեք աշխատանքային օրվա ընթացքում մաքսային մարմինը սույն որոշման 2-րդ հավելվածի 5-րդ կետով սահմանված փաստաթղթերն (դրանք դիմումին կից ներկայացված լինելու պարագայում) ուղարկում է բնակչության պետական ռեգիստրը վարող Հայաստանի Հանրապետության կառավարության լիազոր մարմին՝ այդ մասին ծանուցելով դիմողին:

6. Մաքսային մարմինը սույն որոշման 2-րդ հավելվածով սահմանված կարգի 7-րդ կետում նշված փաստաթուղթը ստանալուց հետո ապահովում է դիմումի հետագա ընթացքը՝ սույն կարգի 4-րդ կետին համապատասխան:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՎԱՐՉԱՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ  
ՂԵԿԱՎԱՐ

Է. ԱՂԱԶԱՆՅԱՆ

Կ Ա Ր Գ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՔԻՑ ԲԱՑԱԿԱՅԱԾ ԼԻՆԵԼՈՒ  
ՀԱՆԳԱՄԱՆՔԸ ԵՎ ԺԱՄԱՆԱԿԱՀԱՏՎԱԾՆ ՍՏՈՒԳԵԼՈՒ, ԱՆՁԻՆ ՄՇՏԱԿԱՆ  
ԲՆԱԿՈՒԹՅԱՆ ՓԱՍՏԻ ՃԱՆԱՉՈՒՄԸ ՀԱՍՏԱՏՈՂ ՓԱՍՏԱԹՈՒՂԹ ՏՐԱՄԱԴԻԵԼՈՒ

1. Սույն կարգով կարգավորվում են Հայաստանի Հանրապետության տարածքից բացակայած լինելու հանգամանքը և ժամանակահատվածն ստուգելու, ինչպես նաև անձին մշտական բնակության փաստի ճանաչումը հաստատող փաստաթուղթ տրամադրելու հետ կապված իրավահարաբերությունները:

2. Օտարերկրյա ֆիզիկական անձի Հայաստանի Հանրապետության քաղաքացիություն, կամ Հայաստանի Հանրապետության հատուկ, կամ Հայաստանի Հանրապետության մշտական (երկարաժամկետ) կացության կարգավիճակ, կամ միջազգային պայմանագրով սահմանված դեպքում դրանց հավասարեցված կարգավիճակ ունենալու, այդ ֆիզիկական անձանց Հայաստանի Հանրապետության տարածքից բացակայելու հանգամանքի և ժամանակահատվածի ստուգումը, օտարերկրյա ֆիզիկական անձին մշտական բնակության համար Հայաստանի Հանրապետություն տեղափոխված անձ ճանաչող փաստաթղթի տրամադրումն իրականացնում է բնակչության պետական ռեգիստրը վարող Հայաստանի Հանրապետության կառավարության լիազոր մարմինը՝ համաձայն սույն կարգին կից սահմանված ձևի:

3. Հայաստանի Հանրապետության տարածքում գտնվելու կամ Հայաստանի Հանրապետության տարածքից բացակայելու հանգամանքի և ժամանակահատվածի ստուգման համար անհրաժեշտ տեղեկատվությունը բնակչության պետական ռեգիստրը վարող Հայաստանի Հանրապետության կառավարության լիազոր մարմինն է տրամադրում

Հայաստանի Հանրապետության ազգային անվտանգության ծառայությունը՝ սահմանային էլեկտրոնային կառավարման տեղեկատվական համակարգ մուտքի թույլտվություն տրամադրելու միջոցով:

4. Հայաստանի Հանրապետություն մշտապես բնակվելու նպատակով ժամանած օտարերկրյա ֆիզիկական անձին մշտական բնակության համար Հայաստանի Հանրապետություն տեղափոխված անձ ճանաչող փաստաթուղթը կարող է տրամադրվել, եթե օտարերկրյա ֆիզիկական անձն ունի Հայաստանի Հանրապետության քաղաքացիություն, կամ Հայաստանի Հանրապետության հատուկ, կամ Հայաստանի Հանրապետության մշտական (երկարաժամկետ) կացության կարգավիճակ, կամ միջազգային պայմանագրով սահմանված դեպքում դրանց հավասարեցված կարգավիճակ, և լիազոր մարմին դիմելու օրվան նախորդող 1825 օր ժամանակահատվածում առնվազն 915 օր բացակայել է Հայաստանի Հանրապետությունից:

5. Սույն կարգի 4-րդ կետում նշված փաստաթուղթը ստանալու համար անձը՝ բնակչության պետական ռեգիստրը վարող Հայաստանի Հանրապետության կառավարության լիազոր մարմին է ներկայացնում՝ Հայաստանի Հանրապետություն մշտական բնակության ժամանող անձ ճանաչելու խնդրանքով դիմում, հայտնելով իր Հայաստանի Հանրապետություն մշտապես բնակվելու մտադրության մասին՝ դիմումին կցելով Հայաստանի Հանրապետության քաղաքացիությունը կամ Հայաստանի Հանրապետության հատուկ, կամ Հայաստանի Հանրապետության մշտական (երկարաժամկետ) կացության կարգավիճակը, կամ միջազգային պայմանագրով սահմանված դեպքում դրանց հավասարեցված կարգավիճակը հաստատող փաստաթուղթը:

6. Բնակչության պետական ռեգիստրը վարող Հայաստանի Հանրապետության կառավարության լիազոր մարմինը ստուգում է «Մաքսային կարգավորման մասին»

Հայաստանի Հանրապետության օրենքի 249.1-ին հոդվածի 2-րդ և 3-րդ մասերի պահանջներին բավարարելու հանգամանքը, և այդ պահանջներին բավարարելու դեպքում ոչ ուշ, քան հինգ աշխատանքային օրվա ընթացքում օտարերկրյա ֆիզիկական անձին է տրամադրում՝ օտարերկրյա ֆիզիկական անձին մշտական բնակության համար Հայաստանի Հանրապետություն տեղափոխված անձ ճանաչող փաստաթուղթը, կամ «Մաքսային կարգավորման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 249.1-ին հոդվածի 2-րդ և 3-րդ մասերի պահանջներին չհամապատասխանելու դեպքում՝ նույն ժամկետում գրավոր մերժում է դրա տրամադրումը:

7. Սույն որոշման 1-ին հավելվածով սահմանված կարգի 5-րդ կետով նախատեսված դեպքում՝ օտարերկրյա ֆիզիկական անձին մշտական բնակության համար Հայաստանի Հանրապետություն տեղափոխված անձ ճանաչող փաստաթուղթը կամ փաստաթղթի տրամադրման գրավոր մերժումը, բնակչության պետական ռեգիստրը վարող Հայաստանի Հանրապետության կառավարության լիազոր մարմինը տրամադրում է Հայաստանի Հանրապետության մաքսային մարմնին՝ մաքսային մարմնի կողմից տրամադրված փաստաթղթերը ստանալուց հետո ոչ ուշ, քան չորս աշխատանքային օրվա ընթացքում:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՎԱՐՉԱՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ  
ՂԵԿԱՎԱՐ

Է. ԱՂԱԶԱՆՅԱՆ

ՏԵՂԵԿԱՆՔ  
ՕՏԱՐԵՐԿՐՅԱ ՖԻԶԻԿԱԿԱՆ ԱՆՁԻ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ  
ՄՇՏԱԿԱՆ ԲՆԱԿՈՒԹՅԱՆ ՏԵՂԱՓՈԽՄԱՆ ՓԱՍՏԻ ՃԱՆԱԶՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Ֆիզիկական

անձ

---

անուն, ազգանուն, հայրանուն

---

ծննդյան օրը, ամիսը, տարեթիվը

Հայաստանի Հանրապետության քաղաքացիության, կամ Հայաստանի Հանրապետության հատուկ,  
կամ Հայաստանի Հանրապետության մշտական (երկարաժամկետ) կացության կարգավիճակը, կամ  
միջազգային պայմանագրով սահմանված դեպքում դրանց հավասարեցված կարգավիճակը հաստատող  
փաստաթղթի սերիան, համարը, տրման օրը, ամիսը, տարեթիվը

---

Հանրային ծառայությունների համարանիշը

ՃԱՆԱԶՎՈՒՄ Է ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ՄՇՏԱԿԱՆ ԲՆԱԿՈՒԹՅԱՆ ՏԵՂԱՓՈԽՎԱԾ  
ԱՆՁ

Տրված է Հայաստանի Հանրապետության ոստիկանության անձնագրային և վիզաների վարչության  
կողմից

---

Տեղեկանքը տրամադրելու օրը, ամիսը, տարեթիվը

Բնակչության պետական ռեգիստրը  
վարող լիազոր մարմնի կամ ստորաբաժանման  
ղեկավար

---

(անուն, ազգանուն)

Կ.Տ.